



ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ
ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՋԱԿՑՈՒՄ



ԻՆՉ Է ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ



Կոոպերատիվը կամավոր սկզբունքով ձևավորված տնտեսական մի միավոր է, որն ստեղծված է ապրանքներ արտադրելու և մատակարարելու նպատակով, որի անդամներն իրականացնում են կառավարումը՝ համատեղ բաժանելով առաջացած ռիսկերն ու շահույթները:

Կոոպերատիվ շարժումը հզոր ուժ է և միջազգային մակարդակով ներկայացված է հանձինս Կոոպերատիվների միջազգային այլանսի (ԿՄԱ): Վերջինս ավելի քան 100 երկրների 230 անդամ կոոպերատիվներին միավորող, կոոպերատիվների սկզբունքների պահպանմանը և կոոպերատիվ շարժման հեղինակության բարձրացմանը հետամուտ կառույց է:

ԿՄԱ ձևակերպման համաձայն՝ կոոպերատիվն այն մարդկանց ինքնավար ընկերակցություն է, որոնք կամավոր կերպով միավորում են համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար: Ըստ 1987թ. ԱՄՆ գյուղդեպարտամենտի՝ կոոպերատիվն օգտագործողի սեփականությունը հանդիսացող, օգտագործողի կողմից վերահսկվող բիզնես է, որն օգուտները բաշխում է օգտագործման հիման վրա: Այս սահմանումն ընդգծում է կոոպերատիվների երեք հիմնական հենասյուները՝ *օգտագործողի սեփականությունն, օգտագործողի կողմից վերահսկողությունը և օգուտների համամասնական բաշխումը*: Տվյալ դեպքում, որպես կոոպերատիվն օգտագործող, նկատի է առնվում կոոպերատիվի անդամը, ով կոոպերատիվ կառույցն օգտագործում է իր նպատակների կենսագործմանը:

Օգտագործողի սեփականության սկզբունքը ենթադրում է, որ կոոպերատիվի



անդամները մասնակցում են կառավարմանն ուղղակիորեն, այսինքն՝ անձամբ կամ անուղղակիորեն՝ իրենց ներկայացուցիչների միջոցով:

ՀՀ քաղ. օրենսգրքի համաձայն՝ կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայլաճարների միավորների միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը:

Այսպիսով՝ կոոպերատիվները հիմնված են փոխադարձ օգնության, ինքնապատասխանատվության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, համերաշխության և համախմբվածության արժեքների վրա:

Կոոպերատիվներն ըստ գործունեության հիմնական ձևերի

Կախված գործունեության բնույթից՝ կոոպերատիվները կարելի է բաժանել 5 ձևի՝ *արտադրական, մարկետինգային, մատակարարման, ծառայությունների և վերամշակող*:

Արտադրական կոոպերատիվներ – Արտադրական կոոպերատիվների օրինակներ են համարվում կոլեկտիվ տնտեսությունները կամ կոլեկտիվ ֆերմաները, որոնք որոշ չափով դեռ գործում են նախկին խորհրդային մի քանի երկրներում (Բելառուս, Մոլդովա, Տաջիկստան և այլն):

Ներկայումս այդ կոլեկտիվ տնտեսություններն աշխատում են կամավոր միավորման սկզբունքի հիման վրա: Գյուղական կամ համայնքային կոոպերատիվի յուրօրինակ տեսակ են հանդիսանում Իսրայելում մեծ թիվ կազմող կիբուցները: Կիբուցում անդամներին են պատկանում հողը, տեխնիկական, արտադրական և



սոցիալական ենթակառուցվածքներն, ուստի կառավարչական բոլոր որոշումներն ընդունվում են կոլեգիալ սկզբունքով:

Մարկետինգային կոոպերատիվներ - Մարկետինգային կոոպերատիվները ֆերմերների ուղղահայաց ինտեգրման օրինակ են: Դրանց հիմնական նպատակն անդամների արտադրած գյուղմթերքների իրացումն է: Այս կոոպերատիվները հավաքում են անդամների արտադրանքը՝ վաճառքի, տեսակավորման,



փաթեթավորման և այլ գործառույթներ կատարելու նպատակով: Մարկետինգային կոոպերատիվների օրինակներ են համարվում՝ կաթի իրացման կոոպերատիվներն, ինչպես նաև կոոպերատիվ

ալրադասները: Որոշ ընկերակցություններ (ասոցիացիաներ) գործում են միայն որպես վաճառքի գործակալություններ: Կան նաև ընկերակցություններ, որոնք զբաղվում են միայն բանակցություններով և ոչ թե ապրանքի վաճառքով, իսկ որոշ ընկերակցություններ էլ ֆերմերներից ապրանք են գնում՝ հետագայում վերավաճառելու նպատակով: Մարկետինգային կոոպերատիվները հաճախ կենտրոնանում են միայն մեկ, երբեմն էլ մի քանի ապրանքների վրա:

Մատակարարման կոոպերատիվ - Մատակարարման կոոպերատիվները ֆերմերներին վաճառում են ներդրանքներ: Որոշ դեպքերում այս կոոպերատիվներն զբաղվում են միայն մանրածախ և մեծածախ վաճառքով: Այս կոոպերատիվների հիմնական նպատակը ֆերմերների կողմից գնումներ կատարելու գործընթացում խնայողությունների ապահովումն է: Ֆերմերների խնայողությունները գոյանում են ցածր գների, բարձրորակ ներդրանքների և ավելի լավ հարմարեցված սարքավորումների օգտագործման միջոցով: Այս կոոպերատիվների վաճառքի ամենամեծ մասը կազմում են տարբեր գյուղատնտեսական ներդրանքները, թեպետ



տնային տնտեսությանը վերաբերող ապրանքներ նույնպես մատակարարվում են:

Մատակարարման կոոպերատիվների յուրահատուկ տեսակ կարելի է համարել սպառողական կոոպերատիվները: Շատ երկրներում այս կոոպերատիվները հիմնականում հայտնի են որպես սննդամթերքի կոոպերատիվներ կամ բնական, էկոլոգիապես մաքուր սննդի խանութներ: Ներկայումս սննդամթերքի կամ սպառողական կոոպերատիվներն ընկալվում են որպես էկոլոգիապես մաքուր կամ օրգանական սննդամթերքի խանութներ:



Ծառայություններ մատակարարող կոոպերատիվներ - Ծառայություններ մատակարարող կոոպերատիվներն առաջ են եկել 1930-1940-ական թթ.-ին իրենց անդամներին այլընտրանք չունեցող բարելավված կամ բարձր որակի ծառայություններ մատուցելու նպատակով: Այսօր կոոպերատիվները կարող են մատուցել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ վարկերի տրամադրում, ապահովագրություն, ոռոգում, կողտաջրերի հեռացում և այլն:

Շատ ֆերմերներ վարկային միջոցներ են ստանում այսպիսի վարկային կոոպերատիվներից: ԱՄՆ-ում ավելի քան 45 մլն գյուղաբնակ հաճախորդներ օգտվում են կոոպերատիվների էլեկտրոնային և հեռախոսային ծառայություններից:

Վերջին տարիներին շատ մարկետինգային և մատակարարման կոոպերատիվներ իրենց ծառայությունների ցանկին ավելացնում են նաև հաճախորդների սպասարկումը՝ շուկայահանման գծով խորհրդատվություն և աջակցություն, ֆերմերային տնտեսության



կառավարման խորհրդատվություն և այլ ծառայություններ, որոնք ֆերմերների համար արժեքավոր են (օր.՝ արհեստական սերմնավորում, կաթի անալիզ, անասունների տեղափոխում, հացահատիկի զտում, ախտահանում և այլն):



Վերամշակող կոոպերատիվներ – Կոոպերատիվի այս ձևը վերամշակում կամ փաթեթավորում է գյուղատնտեսական մթերքները: Վերամշակող կոոպերատիվների օրինակներ են կարագի և պանրի արտադրությամբ, մրգերի փաթեթավորմամբ և բանջարեղենի պահածոյացմամբ զբաղվող ընկերակցությունները: Սա ուղղահայց ինտեգրման ևս մեկ տեսակ է, որի ժամանակ ֆերմերները հավելյալ արժեք են ավելացնում իրենց ապրանքներին և ստանում սպառողների գումարի մեծ մասը: Վերջին տարիներին զարգանում է կոոպերատիվների նոր ալիք՝ նոր սերնդի կոոպերատիվներ, որոնք նորապես մասնագիտանում են մատակարարման շղթայի տարբեր փուլերում և ավելի մեծ՝ հավելյալ արժեքներ ստեղծելով ֆերմերների համար:

Գյուղատնտեսական կոոպերատիվների անհրաժեշտությունը

Կոոպերացիոն հարաբերությունների ձևավորման անհրաժեշտության, նախադրյալների ստեղծման և առավելությունների վերաբերյալ հարցերը բազմիցս են շոշափվել ու բերվել են անվիճելի հիմնավորումներ: Մի շարք երկրներում գյուղատնտեսության զարգացումն, ագրարային քաղաքականության հաջողությունը պայմանավորված են տնտեսվարող սուբյեկտների միջև արդյունավետ համագործակցային հարաբերությունների հաստատման, հատկապես գյուղատնտեսական




կոոպերատիվների ստեղծման, մեխանիզմների մշակման, դրանց կազմակերպման աջակցելուն ուղղված հետևողական քաղաքականությամբ:



Ելնելով համաշխարհային փորձից՝ փոքր գյուղացիական տնտեսություններն իրացման շուկաների և ֆինանսական ծառայությունների մատչելիությանը կարող են հասնել առավելապես կոոպերացման միջոցով, քանի որ կոոպերատիվների տնտեսական մոդելը հիմնված է կամավորության և հիմնականում փոխօգնության սկզբունքների վրա: Ֆինանսական ճգնաժամի պայմաններում, ի տարբերություն մյուս կառույցների, կոոպերատիվ բանկերը և վարկային միությունները ոչ թե սնանկացման են ենթարկվում, այլ ընդհակառակը՝ կարողանում են ընդարձակել իրենց գործունեության շրջանակները, քանի որ այստեղ գործում են ամուր և սերտ սկզբունքներ:

«Կոոպերացիա» բառն ունի լատինական ծագում՝ cooperation: Այն կազմված է «co», «collectu», «opera» արմատներից, որոնցից առաջինը նշանակում է միացնել, կուտակել, համատեղել, իսկ երկրորդն՝ աշխատանք, գործողություն, առանց որի որևէ խնդիր հնարավոր չէ լուծել, այսինքն՝ աշխատանքի, գործունեության միացում կամ համատեղ ջանքերի միավորում: Սա մարդկանց, կազմակերպությունների և պետության համագործակցության միջոցով նախանշված նպատակներին հասնելու և ընդհանուր խնդիրներ լուծելու լավագույն ձևերից մեկն է հանդիսանում:

Համագործակցության առավելությունն այն է, որ գործունեություն ծավալելու դեպքում միջոցների միավորումը, համատեղումն, ավելի շատ արդյունք են ապահովում, քան այդ միջոցների առանձին գործունեության արդյունքները:



ԻՆՉՊԵՐՍ ԿԱՐԵԼԻ Է ՀԻՄՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ



Կոոպերատիվ հիմնելու համար հաստատված կանոններ չկան, սակայն կան ընդհանուր դրույթներ կամ նախնական քայլեր, որոնք կարելի է կիրառել կոոպերատիվի ստեղծման ճանապարհին: Կոոպերատիվն զարգացնելու առաջին քայլը գաղափարի մտահաղացումն է: Քննարկվում է համընդհանուր խնդիրը, հնարավոր լուծումները և որոշումը՝ զարգացնել համատեղ տնտեսական նախագիծ:

Կոոպերատիվ ստեղծելիս հատկապես կարևոր է, որ ստեղծվեն այնպիսի սոցիալական պայմաններ, որոնք կոոպերատիվ կազմելիս փոխշահավետ կլինեն գյուղացու համար, որպեսզի կոոպերատիվի անդամ դառնալով՝ գյուղացին ավելի մեծ եկամուտ ստանա, քան սեփական հողակտորը մենակ մշակելիս: Շատ կարևոր խթան է նաև օրենսդրության սահմաններում արտոնությունները՝ հարկային պարտավորությունների կատարման ընթացքում պետական աջակցություն ստանալու, ինչպես նաև հատուկ պայմաններով վարկեր ստանալու և տեխնիկական սպառազինման համար: Կոոպերատիվ միավորումը կարող է իր մեջ ներառել ոչ միայն գյուղատնտեսական, այլ նաև վերամշակող կամ ծառայություն մատուցող ընկերություններ, որոնք միասին կարող են համընդհանուր ցանց դառնալ:

Կոոպերատիվ ստեղծելիս պետք է փնտրել և գտնել առաջացող հետևյալ մի շարք հարցերի պատասխանները.

1. Կոոպերատիվի անդամների հետաքրքրությունները

Ո՞րն է կոոպերատիվի նպատակը և գործունեության շրջանակը, ո՞րն է լինելու անդամների ընդհանուր շահն, անդամներն ի՞նչ կարիք ունեն մատակարարման,

վերամշակման և իրացման առումով:



2. Կանոնակարգում

Ի՞նչ թույլտվություններ է անհրաժեշտ կոոպերատիվ հիմնելու համար, որքա՞ն է դրանց վճարումների արժեքը, կա՞ն արդյոք անհրաժեշտ պայմաններ, որոնք կնպաստեն կոոպերատիվի զարգացման գործին (օրինակ՝ աջակցության ծրագրեր, վարկավորման նպաստավոր պայմաններ): Ինչպիսի՞ ներքին կանոնակարգ է հարկավոր կոոպերատիվի անդամներին՝ փոխհամաձայնության և վստահության համար:

3. Ֆինանսավորում

Արդյո՞ք անդամներն ի վիճակի են կոոպերատիվում ներդնել սեփական ռեսուրսները, քա՞նի մարդ է անդամագրվելու և ի՞նչ փայաբաժնով, որքա՞ն շրջանառու միջոցներ են հարկավոր, արդյո՞ք անդամ-տնտեսություններն ի վիճակի են և շահագրգռված կայուն կերպով տրամադրելու անհրաժեշտ քանակի ու որակի արտադրանք:



4. Միջոցներ

Ի՞նչ է անհրաժեշտ՝ գրասենյակ, պահեստներ, սառնարաններ: Ի՞նչ սարքավորումներ են անհրաժեշտ՝ տրանսպորտային միջոցներ, գրասենյակային կահույք և տեխնիկա, պահեստի պարագաներ, փաթեթավորման և տեղափոխման սարքավորումներ: Ինչպիսի՞ աշխատակազմ է հարկավոր՝ գրասենյակային աշխատողներ, հաշվապահներ, տեխնիկական աշխատողներ, բանվորներ՝ մթերքն ընդունելու, փաթեթավորելու և առաքելու համար:

5. Իրացում

Ինչպե՞ս կարելի է բացահայտել հաճախորդների կարիքները, որո՞նք են անդամների արտադրած գյուղմթերքների վաճառքի հնարավոր շուկաները, հնարավո՞ր է արդյոք պայմանագրերի կնքումը մատակարարների և սպառողների հետ:

6. Կառավարում



Ովքե՞ր են ղեկավարելու կոոպերատիվի աշխատանքներն, ինչպե՞ս և ի՞նչ չափանիշներով են նրանք ընտրվելու, արդյո՞ք շահերի հակասություններ չեն առաջանալու այլ գործունեության հետ, ինչպե՞ս են բաշխվելու կոոպերատիվի աշխատանքներն, արդյո՞ք բավարար են ներքին ռեսուրսները և կարիք չկա երրորդ կողմի աջակցության և մասնագիտական օժանդակության:

7. Կոոպերատիվի կանոնադրությունը

Կոոպերատիվի կանոնադրությունը ոչ միայն սահմանում է կոոպերատիվի ստեղծման փաստն, այլև կարգավորում է անդամների և կոոպերատիվի փոխհարաբերություններն, այսինքն՝ ըստ էության դա կոոպերատիվի ներքին օրենսդրությունն է, ուստի այն պետք է լինի հնարավորինս մանրամասն: Կոոպերատիվի մասին օրենքի շրջանակներում կարելի է ազատ կերպով կանոնադրության մեջ ներառել բոլոր այն հարցերը, որոնք անհրաժեշտ են կոոպերատիվի կենսագործունեության և նախատեսված նպատակների հասնելու համար:

Կանոնադրության մեջ պետք է նշել կոոպերատիվի անվանումը և վայրը, ինչպես նաև նպատակ, գործարար ծրագիր, անդամների ընդհանուր ժողով, ղեկավար, կառավարման խորհուրդ, փայատիրական կապիտալ, համատեղ պարտավորություններ, աշխատանքների կանոնակարգում:



ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կոոպերատիվի նպատակասլաց և արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է մշակել գործարար ծրագիր (բիզնես պլան): Վերջինս ներառում է

կոռպերատիվի նյութական, ֆինանսական ռեսուրսների օգտագործման ռազմավարությունը, որը պետք է իրականացնել գործարար ակտիվության



զարգացման հետ ներդաշնակ: Նման ծրագիրը ներառում է նաև աշխատանքի արդյունքները մոնիտորինգի ենթարկելու և գնահատելու ցուցանիշներ:

Մեծ հաշվով կոռպերատիվը համայնքային տնտեսություն է, որտեղ նրա անդամները կատարում են գյուղատնտեսական բոլոր աշխատանքները և գործի կառավարումը: Կոռպերատիվի ստեղծումը պահանջում է որոշակի ռեսուրսներ՝ հող, շենքեր, շինություններ, գումար, մեքենաներ, գյուղտեխնիկա, աշխատուժ և այլն: Սովորաբար այս ռեսուրսները լինում են սահմանափակ, և կոռպերատիվի ղեկավարը պետք է կարողանա դրանք արդյունավետ կերպով բաշխել: Նրա անելիքները կարելի է խմբավորել այսպես՝ **պլանավորում, իրագործում, վերահսկում:**

Պլանավորում

- ❖ նպատակների ձևավորում և գնահատում
- ❖ արտադրանքի գների և ծավալի կանխորոշում
- ❖ կոռպերատիվի ռեսուրսների հաշվառում և սոցիալ-տնտեսական պայմանների հստակեցում
- ❖ պլանների մշակում
- ❖ գործունեության ստանդարտների մշակում
- ❖ պլանների վերանայում՝ վերահսկման արդյունքների հիման վրա

Իրագործում

- հողի և այլ հիմնական միջոցների ձեռքբերում
- աշխատուժի վարձում և աշխատանքի կազմակերպում
- պլանով նախատեսված ներդրումների և ֆինանսական միջոցների ձեռքբերում
- կոռպերատիվի գործունեության գրաֆիկների կազմում

- փոխհարաբերությունների հաստատում՝ գործի հետ առնչվող անձանց և կազմակերպությունների հետ

Վերահսկում

- ✓ գործունեությանը ներկայացնող համակարգի ընտրություն
- ✓ հաշվետվությունների կազմում
- ✓ հաշվետվությունների տվյալների համեմատում պլանով սահմանված ստանդարտների հետ
- ✓ պլանից շեղումների բացահայտում



ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

1. Հատուկ սահմանված նպատակներ և ռազմավարություն

Միավորման անդամը կոոպերատիվի ստեղծման օրից պետք է պատկերացնի իր անելիքը, գերնպատակը և դրան հասնելու ընթացիկ գործողություններն, ինչպես նաև՝ այն նպատակին հասնելու համար հաստատված ռազմավարությունը:



2. Համարժեք պլանավորում

Կոոպերատիվի որդեգրած նպատակներին հասնելու համար կարևոր է պլան կազմելը: Անդամների կարիքները գնահատելու համար կարևոր է լավ պատկերացնել և ուսումնասիրել դրանք: Եթե կոոպերատիվի պոտենցիալ անդամները բավարար հետաքրքրություն չեն ցուցաբերում, եթե ընտրված կառուցվածքային ձևը կամ ուղղությունը ձեռնտու չեն կամ էլ տնտեսապես շահեկան չեն, և մեծ է ռիսկային

գործոնն, ապա պետք է վերանայել կոոպերատիվի կազմակերպման ռազմավարությունը:


3. Մասնագիտական համագործակցություն

Կոոպերատիվ ստեղծելու ցանկություն ունեցող մարդկանց մեծ մասը չունի կոոպերատիվ բիզնես զարգացնելու փորձառություն: Կոոպերատիվների զարգացման գործում փորձառու մարդկանց ներգրավելով՝ կարելի է խնայել շատ ժամանակ և ծախսեր: Որքան մեծ լինի գյուղատնտեսության, տնտեսագիտության, իրավաբանական հմտությունների տիրապետող մարդկանց քանակն, այնքան կշահի կոոպերատիվը:



Գյուղացիական կոոպերատիվներ

20-րդ դարի 90-ականների սկզբին Հայաստանը նախկին Խորհրդային Հանրապետությունների շարքում առաջինն էր, որ իրականացրեց հողերի, անասունների, ընտանի թռչունների և գյուղատնտեսական տեխնիկայի զանգվածային մասնավորեցում: Արդյունքում ստեղծվեցին ավելի քան 340.000 մասնավոր, փոքր գյուղացիական տնտեսություններ (միջինը 1.5 հա հողատարածք 1 տնտեսության հաշվով)՝ ավելի քան 1.3 մլն հողակտորներով: Մակայն փոքր և մասնատված գյուղացիական տնտեսություններն, ինչպես նաև հիմնականում հնացած և



ռեսուրսների օգտագործման տեսանկյունից ոչ արդյունավետ գյուղատնտեսական մեթոդները և տեխնոլոգիաները խոչընդոտում էին գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը: Հին և քայքայված ենթակառուցվածքները, գյուղատնտեսական արտադրանքի շուկայական առաջխաղացման հետ

կապված դժվարությունները, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, հմտությունների զարգացման և մասնագիտական ուսուցման համար ոչ համարժեք հնարավորություններն, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման



ծառայությունների ցածր որակը բացասական ազդեցություն ունեցան գյուղական շրջաններում աղքատության խորացման համար, որի մակարդակը 2014թ.-ին հասավ Հայաստանի ամբողջ բնակչության թվի 30%-ին:

ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Արդի գյուղատնտեսությունը նոր մարտահրավերներ է ներկայացնում նաև այգեգործներին, որին մասնագետները պատասխանում են տարբեր առաջարկներով. լավագույն առաջարկներից է հանդիսանում ցածրաձև և միջինաձև խնձորենիներով նոր ինտենսիվ այգիների հիմնումը:

Ինտենսիվ այգու տեղն ընտրելուց և հատակագծելուց հետո պետք է այգին մաքրել քարերից, թփուտներից, մացառներից, այնուհետև հարթեցնել հողը, վարել 30-40սմ խորությամբ, անհրաժեշտության դեպքում կատարել քարհավաք և բուսական մնացորդների հեռացում: Հողն անհրաժեշտ է պարարտացնել գոմաղբով հեկտարին 30-40տ, անհրաժեշտության դեպքում վարել երկրորդ անգամ, հարթեցնել հողը և կատարել տեղաձևում:

Ցածրաձև խնձորենու տնկիների տնկման համար խորհուրդ է տրվում միջշարային տարածությունը վերցնել 3-4մ, իսկ տնկիների միջին հեռավորությունը՝ 1-1,5մ: Միջին աճեցողությամբ տնկիներով խնձորի այգի հիմնելու համար միջշարային տարածությունը պետք է վերցնել 4-5մ, միջբուսայինը՝ 3-4մ և կատարել համապատասխան գծանմուշների ապագա շարքերի ուղղությամբ՝ նշելով նաև ապագա ծառերի տեղը և պատրաստել տնկման փոսերը:



Տնկանյութի ստացում



Այգետնկումները կատարվում են հիմնականում տեղական և եվրոպական պատվաստակալների վրա պատրաստված ցածրաճ և միջինաճ խնձորենու տնկիներով: Ծանոթ տեղական պատվաստակալներից են ցածրաճ (թզուկային) ենթատեսակներից «պարադիսական» կամ «դրախտախնձորը» բազմանում են անդալիսներով, կտրոններով և մացառներով, որոնց արմատը հողում տարածվում է 40-50սմ խորությամբ, բերքատվության շրջանն սկսվում է 2-3 տարում: Իսկ միջինաճ (կիսաթզուկային) ենթատեսակներից «դուսենը», որի արմատային համակարգը հողում խորանում է 60-80սմ խորությամբ, սկսում է բերք տալ 4-5-րդ տարում:

Հովանդիայից ներկրվում են ցածրաճ (B9) և միջինաճ (MM 109) պատվաստակալներ, որոնց բազմացումը տեղի է ունենում անդալիսով: Արդեն պատվաստի պիտանի լինելու ժամանակ կատարվում է աչքապատվաստ, ինչպես նաև ձմեռային կտրոնապատվաստ և ստանում բարձրորակ տնկիներ, որոնք պիտանի են ինտենսիվ այգիներ հիմնելու համար:

Տնկիներ կարելի է ստանալ նաև սեփական նախաձեռնությամբ. վերոհիշյալ պատվաստակալներ ունենալու դեպքում պետք է աճեցնել վերջիններս և պատվաստել ցանկացած սորտի խնձորի վրա կամ ձեռք բերել արդեն գոյություն ունեցող և տվյալ գործով զբաղվող կազմակերպություններից:

Այգու հիմնում

Խնձորի այգին կարելի է հիմնել աշնանը կամ գարնանը: Ցածրաճ (թզուկային) տնկիներով այգու հիմնումը պետք է կազմակերպել նախապես հենասյուները տնկած և



լարերն անցկացրած տարածքում, որի հիմնումից անմիջապես հետո տնկու բունը ֆիքսվում է փայտացցի վրա, որն իր հերթին կապվում է լարերից: Իսկ միջինաճ (կիսաթզուկային) տնկիները հենայուններ և լարեր չեն պահանջում:




Տնկումը կատարվում է նախապես պատրաստված փոսերի մեջ: Թարմացվում է տնկանյութը, հեռացվում վնասված, չորացած և ոչ պիտանի արմատները: Տնկումից առաջ ցանկալի է արմատային համակարգը թրջել «ծիծային» (*պարարտ, մածուցիկ հեղուկ, որը պատրաստվում է թարմ գոմաղբով և կավահողով*) լուծույթում և նոր տնկել: Տնկու արմատները հավասարապես դասավորվում են փոսի մեջ նախօրոք բրգաձև լցված հողախառնուրդի (*հասունացած գոմաղբի կամ տորֆի 1 բաժինը 3 բաժին լավորակ հողի հետ խառնած, որին կարելի է ավելացնել նաև 200-250գ հասարակ սուպերֆոսֆատ*) վրա, որից հետո ցցափայտն ամրացվում է հողի մեջ՝ տնկու բնից 7-8սմ հեռավորության վրա այն կողմից, որ կողմից փչում են քամիներն. ընդ որում ցցափայտի ծայրը պետք է 5-6սմ ցածր լինի կմախքային առաջին ճյուղից: Այնուհետև փոսի եզրերի վերին շերտից լավորակ հողը վերցվում է և լցվում արմատների վրա այնպես, որ հողի և արմատային համակարգի մեջ դատարկ տարածք չմնա, հակառակ դեպքում տնկիների կաշտոկականությունը կլինի շատ ցածր:

Կաշտոկականության վրա մեծ ազդեցություն ունի նաև տնկման խորությունը: Պետք է տնկել այնպես, որ տնկելուց 2-3 օր հետո (*հողի նստելուց*) արմատավզիկը հավասարվի գետնի մակերեսին կիսաբաց վիճակում: Տնկու բնի շուրջը պետք է պատրաստել բաժակ տնկին ջրելու համար այնպես, որ յուրաքանչյուր տնկու տակ առնվազն 2 դույլ ջուր լցվի: Տնկումից և առաջին ջրումից 2-3 օր անց, երբ հողը քեշի է գալիս, պետք է ստուգել, և եթե հողը շատ է նստել, և արմատավզիկը լավ բաց է, անհրաժեշտ է մի քանի բահ



հող լցնել՝ կիսով չափ ծածկելով արմատավզիկը և արմատները՝ չթողնելով բաց արևի և քամու տակ:

Նորաստուկ այգու էտ և ձևավորում



Աշնանը տնկած տնկիներն էտում են հաջորդ տարվա գարնանը մինչև բողբոջների ուռչելն, իսկ գարնանը տնկված տնկիները՝ տնկելուց անմիջապես հետո: Նորաստուկ խնձորենին խորհուրդ է տրվում էտել հետևյալ կերպ՝ կախված տնկու աճեցման ուժից կողային ճյուղերը կարճացնել նրանց երկարության 1/3-ից մինչև կեսի չափով, իսկ ուղեկցող ճյուղը՝ շատ թույլ 1/3-ի չափով այնպես, որ այն 15-20սմ-ով ավելի բարձր լինի կողային ճյուղերից:

Լարային այգիներում ցածրաճ (թզուկային) տնկիների էտի և ձևավորման ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ կողային ճյուղավորումները լինեն շարքերի ուղղությամբ, դեպի շարքերի ներսը թեքված ճյուղերը պետք է հեռացնել հիմքից: Թզուկային տնկիների ձևավորումը ցանկալի է կատարել բազմահարկ, բազմաթև, հովհարանման ձևավորումով:

Այս ձևավորումը կիրառելու դեպքում պետք է տնկիների հեռավորությունն իրարից պահպանել առնվազն 1.5մ, իսկ բրգաձև ձևավորման ժամանակ պետք է չհեռացնել ուղեկցող ճյուղը կամ շատ քիչ կարճացնել, որի դեպքում 50-60սմ-ով ավելի երկար է ծառի հասակը և կարճ է կողային ճյուղավորումները, որի դեպքում միջբնային հեռավորությունը պետք է վերցնել 1մ:

ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ինտենսիվ այգիների, մասնավորապես թզուկային խնձորի այգու հիմնումը, լուծում է մի շարք հարցեր՝ ավանդական այգիների համեմատությամբ ունենալով շատ դրական, արդյունավետ և շահութաբերության բարձր տոկոս ապահովող արտադրություն:

Ինտենսիվ այգու առավելություններն են՝

➤ Միավոր տարածքի վրա տեղավորվում են մեծ թվով ծառեր՝ (թզուկայինի դեպքում 2000-3000 հատ, կիսաթզուկայինի դեպքում՝ 800-1200 հատ), ավանդական (400-500 հատ) ծառերի փոխարեն:

➤ Լարային այգիների դեպքում մեծանում է մեքենայական աշխատանքների ծավալը, ձեռքի աշխատանքը հասցվում է մինիմալի:

➤ Կրկնակի բարձրանում է բերքատվությունը (ավանդական 20տ/հա-ի փոխարեն ինտենսիվ այգու բերքատվությունը հասնում է 40-50տ/հա):

➤ Բարձրանում է բերքի որակը (1-ին տեսակի պտուղները կազմում են համախառն բերքի մոտ 90%-ը ավանդական 40%-ի փոխարեն):


➤ Շատ ցածր կամ միջին սաղարթ ձևավորելու շնորհիվ անհամեմատ հեշտանում է ձեռքի աշխատանքն՝ սկսած էտից մինչև բերքահավաք:

➤ Մեղմացնում կամ լիովին վերացնում է խնձորենու բերքատվության այսպես կոչված «պարբերականություն» բացասական երևույթը, որի պայմաններում ավանդական այգիները բերք են ապահովում 2 տարին մեկ անգամ, իսկ այս դեպքում բերքն ապահովվում է զրեթե ամեն տարի:

➤ Ցածրաճ (թզուկային) ինտենսիվ այգիներում առավել հեշտ է անցկացնել ոռոգման նորագույն մեթոդներ (օր.՝ կաթիլային, ենթահողային) և հակակարկտային ցանցեր. վերջինս վերացնում է ջրի պակասը կամ օգտագործում խնայողաբար և պայքարում կարկտահարության դեմ՝ այն հասցնելով 0-ի:



Ինտենսիվ այգիներում կարելի է ստանալ բարձր և որակյալ բերք՝ ապահովելով արդյունավետ մշակություն և բարձր շահութաբերություն՝ ավանդականի համեմատ 3-4 անգամ մեծացնելով ստացված հասույթը, և նվազագույնի հասցնելով ամենամյա անհմաստ ներդրումները:



Քիշմիշային սորտերի խաղողի արտադրության ընդլայնման ծրագիր

Հաշվի առնելով Հայաստանում խաղողագործության զարգացման հնարավորությունները՝ քիշմիշային խաղողի ունիվերսալ հատկությունները և համաշխարհային խաղողագործության զարգացման միտումները՝ Հայկական բերքի առաջնության կենտրոնի (ՀԲԱԿ) կողմից 2012 թվականին մշակվել և իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում խաղողի քիշմիշային սորտերի ինտենսիվ այգիների հիմնման փորձնական ծրագիրը»:

Ծրագրի նպատակն է մշակել և փորձարկել խաղողի արժեքավոր քիշմիշային սորտերի բազմացման արդյունավետ մեթոդները, գնահատել դրանց կիրառմամբ տնկանյութի արտադրության և այգիների հիմնման տարեկան հնարավոր



ծավալներն, ուսումնասիրել խաղողագործության մեջ կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները և Հայաստանում դրանց ներդրման հնարավորությունները, տալ այդ սորտերի խաղողի համալիր վերամշակման ուղղությունները: Ծրագրում ընդգրկվել են մասնավորապես խաղողի քիշմիշային Երևանի Դեղին կլոն № 1, Քիշմիշ Սև, Քիշմիշ Խիշրաու, Մարմարի և Փարվանա սորտերը:

Ծրագիրը նախատեսում է Հայաստանի մի շարք մարզերում /Արարատ, Արմավիր, Վայոց Ձոր և այլն/ առաջիկա տասը տարիների ընթացքում հիմնել մինչև 5 հզ. հա խաղողի քիշմիշային սորտերի ինտենսիվ այգիներ:

Այգիները պետք է հիմնվեն ծրագրի շրջանակներում ստեղծված տնկարաններից ստացված բարձրորակ տնկանյութերով, պետք է ապահովվի կաթիլային ոռոգման ու հակակարկտային պաշտպանության համակարգերով, որոնց կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել այգիների մշակության աշխատատարությունն ու այգիներն, ինչպես նաև բերքը պաշտպանել կարկտահարման վնասներից:



Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներ

մինչև 5000 հա քիշմիշային բարձրաբժեք սորտերի խաղողի այգիների հիմնում



այգիների ամբողջական բերքի անցնելուց տարեկան 150 հզ. տոննա քիշմիշային սորտերի խաղողի արտադրություն



տարեկան 54 մլրդ դրամ արժողությամբ 135 հզ. տոննա քիշմիշային սորտերի խաղողի արտահանում թարմ և վերամշակված վիճակում



տեղական խաղողի հումքով անկորիզ չամիչի և քիշմիշային գինիների արտադրության զարգացում և արտահանման ընդլայնում



գյուղական համայնքներում 15-20 հզ. աշխատատեղերի ստեղծում:



նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում՝

ա) խաղողի մշակման ագրոտեխնիկական միջոցառումների կրճատում և մշակության ծախսերի նվազեցում



- բ) կարկուտից այգիների պաշտպանում և երաշխավորված բերքի ապահովում
գ) սակավաջուր հողատարածքների մշակության հնարավորությունների
ստեղծում
դ) այգիների եկամտաբերության բարձրացում

Ինտենսիվ այգիների հիմնման ծրագիր



ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 2018 թվականից նախատեսում է մեկնարկել նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ինտենսիվ այգիների հիմնման պետական աջակցության ծրագիր: Ըստ ծրագրի՝ նախատեսվում է հիմնել տարեկան շուրջ 207 հա ինտենսիվ նոր այգիներ, ինչը թույլ կտա հնդավոր պտղատեսակների ներմուծումը փոխարինել տեղական արտադրությամբ:

Ինտենսիվ այգիների հիմնումը կարող է շատ շահավետ լինել, քանի որ նման այգիների բերքն ավելի բարձրարժեք է, իսկ իրացումը՝ երաշխավորված: Ըստ ծրագրի՝ գյուղացիական տնտեսություններին տրամադրվելու է տարեկան 5% տոկոսադրույքով վարկ, որը տրվելու է 5 տարի ժամկետով և առավելագույնը 10 հա հողատարածքի վրա այգիներ հիմնելու համար:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):